

Գիրքն ամփոփում է 1989ի Հոկտեմբերի 21ին Նիւ Եորքի Պատմական Ընկերությունում հրաւիրուած գիտաժողովի նիւթերը, որոնք նուիրուած են Անիի կաթողիկէ եկեղեցու հիմնադրման հազարամեայ յորելեանին: Գիտաժողովի կազմակերպիչն է եղել Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ամերիկայի Սիացեալ Նահանգների (ԱՄՆ) Արեւելեան Թեմի առաջնորդ Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանը, որը յայտնի է հայագիտական բազմաթիւ նախաձեռնութիւններով: Տասներեք տարի առաջ ձեռնարկուած այս միջոցառումը աննախադէպ է եղել իր տեսակի մէջ, քանի որ 1921ին մի կողմից, Խորհրդային Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի եւ միւս կողմից քեմալական Թուրքիայի միջեւ կնքուած Կարսի պայմանագրից յետոյ, երբ Անին պաշտօնապէս ճանաչուեց իբրեւ Թուրքիայի տարածք, քաղաքը դադարել էր հնագիտական հետախուզումների վայր լինելուց եւ կարծես միտումնաւոր կերպով կտրուել էր քաղաքակիրթ աշխարհից¹:

Իհարկէ արժէ մատնանշել, որ 1989ից մինչեւ այսօր յիշեալ բնագաւառի ուսումնասիրութեան գործում տեղի են ունեցել էական տեղաշարժեր: Նոյն թուականին, ֆրանսիացի մասնագէտների հետ համատեղ, Թուրքիայում սկսուել են հնագիտական պեղումներ: 1990ին ԱՄՆում լոյս տեսնող *Արմինիոն Ռիվի* պարբերականը իր չորրորդ համարը նուիրել է Անիի կաթողիկէին: 1997ին հրապարակ է բարձրացել Կարէն Մաթեոսեանի *Անի. Եկեղեցական Կեանքը Եւ Ձեռագրական Ժառանգութիւնը* (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997) մենագրութիւնը, իսկ 2001ի Փետրուար-Մայիս ամիսներին Փարիզի քաղաքապետարանի հովանաւորութեամբ բացուել է «Անի. Հայաստանի Մայրաքաղաքը 1000 Թուականին» ցուցահանդէսը, որի քարտացուցակ-կատալոգը Նուբարեան Գրադարանի տնօրէն Յարութիւն Ռայմոնդ Գեորգեանի ջանքերով վերածուել է Անիի պատմութեան եւ արուեստի մի ճաշակաւոր եւ գողտրիկ շտեմարանի²:

Աշճեան Սրբազանի 1989ի օգտաշատ ձեռնարկը իր հիմնական բովանդակութեամբ հայագէտի գրասեղանին է դրուում միայն տասներեքամեայ մոռացութիւնից յետոյ: Գրքի խմբագիր, ներկայումս Լոս Անջելէսի Համալսարանի պրոֆեսոր Պիտեր Քաուին արել է հնարատուր գիրքն աւելի ամբողջական դարձնելու համար: Գրքում տեղ չի գտել միայն Ադրիանօ Ալպագօ Նովելլոյի «Միջնադարեան Տաճարները եւ Անիի Կաթողիկէ Եկեղեցին» վերնագրով զեկուցումը, որը փոխարինուել է Ալվինո Միրզոյեանի յօդուածով, որին անդրադառնալու ենք ներքեւում: Քաուին՝ ափսոսանքով յիշելով անցած տասներեք տարիների ընթացքում ի Տէր հեռացած գիտաժողովի մասնակիցներ Պաօլօ Կունեյոյի, Թաթիկ Յակոբեանի, Վազգէն Բարսեղեանի եւ Արմէն Զարեանի անունները, ժողովածուն էլ նուիրել է նրանց յիշատակին: Բացի հրատարակչի առաջաքանից, խմբագիրը դրել է մաշտոցեան այբուբենի իր օգտագործած գրադարձութեան բանալին³, գրքում լոյս ընծայուած շուրջ 47 պատկերների ցանկը, 11 զեկուցում-հետազոտութիւն՝ անգլերէնով ու ֆրանսերէնով: Խմբագիրը բուն գիտաժողովի

միութիւն կցել է յաւելում, ուր ներառել է Եւրոպայի Խորհրդի Ստրասբուրգում 1990ի Ապրիլի 12-14ը տեղի ունեցած «Հայոց ճարտարապետական Ժառանգութեան Հովանաւորութեամբ» նուիրում ցուցանող միտքերի ընդունած վերջնական բանաձեւերը: Նա գրքին կցել է նաեւ յօդածագիր հեղինակների համառօտ գիտական կենսագրութիւնները, կազմել օգտագործուած գրականութեան մատենագիտութիւնը, անձնանունների, տեղանունների եւ առարկայական ցանկերը: Մատենագիտութիւնը, սակայն, կազմուած է ամիսնամ: Օրինակ, Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանի յօդածները յայտնուել են զբաղարձուած երկու տարբեր անունների՝ Hovsep'yanի եւ Yovsep'eanի տակ, իսկ Երեսնամեայ հրատարակուած *Դիւան Հայ Վիմագրութեան* շարքի առաջին հինգ հատորների խմբագիր է համարուած Յովսէփ Օրբելին, երբ վերջինս կազմել է միայն *Դիւանի* առաջին հատորը, իսկ առաջին հինգ հատորների խմբագիրն է Սեդրակ Բարխուդարեանը:

Ձեկուցումների հեղինակներն յաճախ իրենց գրածը փաստարկում են նաեւ դիդակտիկ միտքերով, լուսանկարներով եւ ճարտարապետական յուշարձանների չափագրութիւններով, որոնց հիմնական մասը վերաուպրիւմներ են: Այս կապակցութեամբ, արժէր միշտ մատնացոյց անել ընդօրինակութեամբ նախատիպ դարձած հրատարակութիւնները:

Առաջաբանում, Քառիմ փորձել է բնորոշել Անիի տեղը հայկական միջնադարեան եւ արդի հասարակա-քաղաքական եւ գեղարուեստական մտածողութեան մէջ, անդրադարձել Անի պատմա-մշակութային երեսոյթի տարբեր դրսեւորումներին:

Լիւսի Տէր Մանուէլեանը (Թաֆց Համալսարան) իր «Անի. Հայաստանի Առասպելական Մայրաքաղաքը» զեկուցման մէջ Անին դիտել է իբրեւ առասպելական մայրաքաղաք, մեծ տեղ յատկացնելով քրիտանացի հեղինակ Լորդ Պլատրիկ Քիմոնսի (մհ. 1976) եւ նկարիչ Արշակ Ֆէփլաճեանի (1866-1947) ճամբորդական խոհերին: Տէր Մանուէլեանն ընդգծում է Անիի միջազգային նշանակութիւնը, դերը Չինաստան-Եւրոպա առեւտրական ճամապարհի վրայ. այնտեղ դարերի ընթացքում տեղի հայկական մշակոյթի ֆոնի վրայ խաչաձեւուել են բիւզանդական, պարսկական, արաբական, սելջուկեան, վրացական, օսմանեան եւ ռուսական մշակոյթները: Քաղաքի պատմութեան հերոսական գծերը, ըստ Տէր Մանուէլեանի, առաւել բացայայտուել են Բագրատունեաց դարաշրջանում, որի օրինակն է Անիի կաթողիկէի շինարարութիւնը 989ին: Հեղինակն ափսոսում է, որ պատմութեամբ եւ ճարտարապետական յուշարձաններով այդքան հարուստ եւ եւրոպական միջնադարեան ճարտարապետութեան վրայ իր ազդեցութիւնը թողած քաղաքը թիչ է յայտնի ամերիկեան համալսարանների արուեստի տեսաբաններին: Քաղաքի պատմութեան կարճ ակնարկից յետոյ, հեղինակն ընդգծում է քաղաքի բազմաբնոյթ ճարտարապետական կառուցուածքը եւ յատկապէս պաշտպանական սիստէմը, որն աղերսներ ունի կիլիկեան հայկական ամրոցաշինութեան աւանդների հետ:

Երեսնի Պետական Համալսարանի դասախօս Թաթիկ Յակոբեանի «Անի. Ողիսական Դարերի Միջով» զեկուցումը նուիրում է Անի մայրաքաղաքի պատմութեանը: Հեղինակն հաւաստում է, որ այն բնակավայր է եղել սկսած Նոր Քարէ Դարից: Պեղումների ընթացքում յայտնաբերուել են կիլիկեան չի-

նուրիմներ, սալաշար դամբարաններ, բրոնզե ապարանջան, հեղինիստական դրամներ են.: Արջկաբերդում գտնուել է հեթանոսական ամրոց եւ տաճար: Նախաքրիստոնեական այս գտածոների համար Մառը թանգարանում առանձնացրել էր յատուկ բաժին: Դ. դարում քաղաքն անցնում է Կամսարականներին եւ արդեն նրա մասին Ե. դարում յիշատակում են պատմիչներ Եղիշեն ու Ղազար Փարպեցին: Ը. դարում ամրոցն անցնում է Բագրատունիներին: Հեղինակն, համադրելով Մառի պեղումների նիւթերը պատմական սկզբնաղբիւրների հետ, ամոքադառնում է քաղաքի զարգացման հիմնական փուլերին, ներառելով մոնղոլական ռազմարշաւների դարաշրջանը, յիշատակելով քաղաք ներխուժած մուսաճողներին: 1988ի Սպիտակի երկրաշարժի ֆոնի վրայ ցոյց է տալիս քաղաքի ամրացման կարեւորութիւնը:

Բոլոնիայի համալսարանի պրոֆեսոր Գաբրիելյա Ուլուիոջեանը, «Անիի Եկեղեցիները Ըստ Վիմական Արձանագրութիւնների Վկայութիւնների» գեղուցման մէջ, անդրադառնալով Ժ.ԺԴ. դարերի պատմական սկզբնաղբիւրներին, վկայութիւններ է բերում պատմիչներ Կիրակոս Գանձակեցուց, Մատթէոս Ռոտալեցուց եւ Մխիթար Այրիվանեցուց, որոնք Անին անուանում են «հազար ու մէկ եկեղեցիների քաղաք»: Պատմական երկերի ժխտ տեղեկութիւններին հետագոտողն հակադրում է եկեղեցիների կառուցման մասին վիմական արձանագրութիւնների առատութիւնը: Հեղինակը բարձր է գնահատում Օրբելու դերը Անիի վիմագիր արձանագրութիւնները հաւաքելու եւ ընթերցելու գործում, յիշատակելով նաեւ միւս երախտատուների, յատկապէս Կարապետ Բասմաջեանի դերը: Այնուհետեւ, Ուլուիոջեանը ներկայացնում է Անիի կաթողիկէի, Գագկաշէնի, Աբուլամրենց, Տիգրան Հոնենց, Արքունիքի, Սարկաւազ Երեցի, Ս. Աստուածածնի, Ջաքարէ Ջաքարեանի, Ուքան Քարեմատիւնի եւ այլ եկեղեցիների շինարարական վիմագիր արձանագրութիւնները եւ կարեւորում դրանց յետագայ հետազոտութիւնն ու նորերի յայտնաբերումը:

Ֆրանսիահայ արուեստաբան Պատրիկ Տօնապետեանն իր «Տրդատ Դարտարապետը» հետազոտութիւնը նուիրել է Անիի ամենամշանաւոր ճարտարապետ Տրդատին, յիշատակելով նրա մասին լոյս տեսած հիմնական ուսումնասիրութիւնները: Հեղինակն սկզբում անդրադառնում է հաստատաբար Տրդատի կողմից կառուցուած շինութիւններին՝ Արգինայի եւ Անիի կաթողիկէներին, Կ. Պոլսի Ս. Սովիայի տաճարին, Գագկաշէնին եւ միայն ապա՝ նրան վերագրուած կառույցներին՝ Անիի արքունական պալատին եւ նրա հիւսիս-արեւելեան սենեակին, Արգինայի կաթողիկոսական մատավայրին ու եկեղեցիներին, Հաղբատի եկեղեցուն, Սմբատ թագաւորի պարսպին, Մարմաշէնի գլխատը եւ Անիի Ս. Փրկչի եկեղեցիներին: Եթէ Տրդատի կողմից հաստատաբար կառուցուած եկեղեցիները թուագրում են 973-1001 թուականներով, ապա նրան վերագրուածները թուագրում են 960-1036 թուականներով: Այդ իսկ պատճառով, կարծում ենք շատ զգոյշ պէտք է լինել, յատկապէս ԺԱ. դարով թուագրուող յուշարձանները նրան վերագրելու խնդրում:

Արեւմտեան Լոս Անջելէսի Վարժարանի դասախօս Ալիս Թէյլորի թեման է «Անիի Պարիսպները. Նրանց Գործնական Նշանակութիւնը»: Հեղինակը դիտարկում է միջնադարեան պարսպի դերը եւ նշանակութիւնը մի քանի տեսակիւմից՝ իբրեւ շրջակայքի վերահսկող, արուեստի գործ, արքայական իշխանու-

քեան ու հզօրութեան խորհրդանիշ: Հեղինակն, յղելով արեւմտաեւրոպական, յատկապէս՝ անգլիական միջնադարեան ամրոցներին վերաբերող գրականութիւնը, գալիս է այն եզրակացութեան, որ Անիի պարիսպները եւս առաջին հերթին ունէին սիմվոլիկ նշանակութիւն եւ հաւաստում էին Բագրատունեաց թագաւորութեան հզօրութիւնը: Հեղինակն Անիի պարսպի հետ զուգահեռներ է անցկացնում, համեմատելով այն նախաարաքական շրջանի Հայաստանի ամրոցների, ինչպէս նաեւ Լոռիի եւ Կիլիկիայի ամրոցների հետ, յատկապէս Թեոդոսուպոլիսի (Կարնոյ), Դուինի եւ Կ. Պոլսի կրկնակի պարսպի հետ, որն էլ մնանակաւուն էր իբրեւ քրիստոնէութեան մայրաքաղաք:

Արուեստաբան Արմէն Զաքեանի «Գետնափոր Անին» գեկուցման մէջ քաղաքաշինութեան իւրայատկութիւններից է համարում գետնափոր քաղաքի գոյութիւնը, որը նախատեսուած է եղել արհեստա-աշխատանքական դասակարգի համար: Ըստ հեղինակի, այդ բնակարաններում ապրել է քաղաքի 100,000 բնակչութեան երկու տոկոսը՝ շուրջ 2000 մարդ: Հեղինակն, յեռուելով Մատի ամիական արշաւների մասնակից Դ. Կիպչիձէի հետազօտած նիւթի վրայ, անդորդառնում է Շաղկոցաձորի 16 աղանաւտների, Իգաձորի դամբարան-եկեղեցիների, Շաղկոցաձորի եւ Գայլաձորի եկեղեցիների եւ երդիկաւոր շինութիւնների ճարտարապետական իւրայատկութիւններին:

Հելէն Էվանսը «Անին եւ Գագիկ Կարսեցու Աւետարանը» գեկուցման մէջ համեմատում է Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցու որմնանկարները յիշատակուած ձեռագրի մանրանկարների հետ: Հեղինակը փորձում է գտնել ձեռագրեր, որոնք ժամանակով եւ հետաւորութեամբ մօտ են Անիի կաթողիկէին ու Ս. Գրիգոր Եկեղեցուն, եւ մատնանշում է արուեստաբան Տատիանա Իզմայլովայի կողմից շրջանառութեան մէջ դրուած, Մաշտոցի անուան Մատենադարանում պահուող Բագրատունեաց դարաշրջանի երեք մատենաները՝ հ. 3796 (1056 թուական), հ. 1009 (1060 թուական) եւ հ. 7736 «Մուղնու Աւետարանը» (ԺԱ. դար): Էվանսի այն միտքը թէ Անիում գրուած ձեռագրեր չկան՝ ամբողջովին հերքուած է Մաթեոսեանի վերոյիշեալ մեմագրութեան մէջ: Էվանսը մանրամասնօրէն ներկայացնում է նաեւ Երուսաղէմի հ. 2556 մատակը, որ Սիրարփի Տէր-Ներսէսեանի կողմից թուագրուել է 1045-54ի միջեւ եւ վերագրում է Գագիկ Կարսեցուն: Էվանսը գտնում է, որ Տիգրան Հոնենցի եւ Անիի այլ եկեղեցիների որմնաքանդակները ազդեցութիւնն են կրել Անիի նախասելջուկեան շրջանի, յատկապէս՝ քիզանդական որմնանկարչութեան եւ մանրանկարչութեան:

Սանկա-Պետերբուրգի Էրմիտաժ թանգարանի գիտական աշխատակից Ալլիդա Միրզայեանի «Անիից եւ Հայաստանի Այլ Վայրերից Յայտնաբերուած Բրոնզէ Բուրվառների Շագումը եւ Թուագրումը» յօդուածը նուիրուած է Պատմական Հայաստանի տարածքում յայտնաբերուած 13 բուրվառների գիտական նկարագրութեանն ու արուեստաբանական քննութեանը: Հեղինակը միմեանց հետ համեմատելով Հայաստանի Պատմութեան Պետական (ՀՊՊԹ), Գիմրիի, Ղափանի երկրագիտական թանգարաններում եւ Էրմիտաժում պահպանուող նմոյշները, դրանց պատկերագրութիւնը քննելով աշխարհի միւս թանգարաններում պահպանուող նոյնատիպ առարկաների դաջածքների հետ, հետեւելով Յովսէփեանին ու Յարութիւն Քիրտեանին, եկել է այն համոզման, որ դրանց մեծ մասը Թ.-ԺԳ. դարերում Ասորիք-Պաղեստինից ներկրուել են Հայաստան,

իսկ ՀՊՊԹի հ. 1265 ու Ղափանի թանգարանի մոտջները՝ ներկրում բուրվառների հայ վարդապետների ընդօրինակած պատճեններ են: Հեղինակը ներկրում է համարում նաեւ ՀՊՊԹի հ.հ. 1465 եւ 1465b մոտջները, որոնք գտնուել են Անիի Գագկաշէն եկեղեցում: Հեղինակի մատակն է եղել մերժել Ն. Գ. Յակոբեանի, Ի. Գ. Ղարիբեանի եւ Հ. Ա. Մելքոնեանի *Բանբեր Երեւանի Համալսարանի* հանդէսի 1988ի հ. 1 (64), էջ 110-120ում լոյս տեսած «Սիջմադարեան Հայաստանի Խնկամանները» յօդուածի դրոյթները, ըստ որոնց բուրվառներն ունեն հայ արուեստին բնորոշ առանձնայատկութիւններ եւ հաւանաբար Հայաստանում դրանց պատրաստման կենտրոններն են եղել Անին եւ Տաթեւը: Ինչեւէ, հարցի հետազոտութիւնը բանավէճի փուլն է մտել եւ կարծում ենք մօտակայ ժամանակներում հնագէտ միջմադարագէտները նախանձախնդրի կը լինեն նիւթի ամբողջական դասակարգմանն ու համակողմանի քննութեանը:

Ճարտարապետ Պաօլ Կունեյի հրապարակումն ունի «Անիի Հնագիտական Տեղանքի Գիտական Հետազոտութեան Պատմական Ուրուագիծ Եւ Սիջագային Հնագիտական Արգելոցի Ստեղծման Նախագծի Առաջարկ» վերնագիրը: Հեղինակը քարտեզների միջոցով ճշգրտում է Անի-Երերուք հնագիտական արգելոցի տարածքը, քննարկում է Թուրքիայի եւ Հայաստանի տարածքներից առանձին հողակտորի առանձնացման հարցը եւ Անիի հնագիտական միջագային արգելոց ստեղծելու գաղափարը: Նման հիմնադրման փաստարկ են ծառայում Անի մայրաքաղաքի առեւտրական եւ մշակութային առնչութիւնները արեւելքի եւ արեւմուտքի քաղաքակրթութիւնների հետ, իբրեւ սելջուկ-մուսլմանական եւ քրիստոնէական ճարտարապետութիւնների մերձեցման գօտի, Անիի իբրեւ ժամանական եւ գոթական ճարտարապետական դպրոցների հետազոտման մայրատիպ: Կունեան պնդում է, որ մնաց արգելոցի ստեղծումը աւելի է կարեւորում նրանով, որ տարածքում տեղի են ունենում հզօր երկրաշարժեր, որոնց աւերների վերացմանը զօրու չեն ո՛չ Թուրքիան, ո՛չ էլ Հայաստանը: Կունեան միջագային արգելոցի ծրագրերի մէջ է մտցնում հնագիտական պեղումները, որոնք պիտի կատարուեն թուրքական կողմի հետ համագործակցութեամբ, քանի որ Թուրքիայում էլ վերջին տարիներին աճող հետաքրքրութիւն է արձանագրւում յիշեալ յուշարձանի նկատմամբ: Հեղինակն յատկապէս շեշտում է Անկարայի Հաջեթթեփէի Համալսարանի պրոֆեսոր Բ. Կարամազարլիի գործունէութիւնը: Սիջագային հնագիտական արգելոցի աշխատանքները, ըստ նրա ծրագրի, պիտի վերահսկի հայկական ճարտարապետական ուսումնասիրութիւնների Հոմի կենտրոնը:

Պիտէր Քաւին «Անիի Պահպանութեան Հիմնախնդիրները» յօդուածում բարձր գնահատելով պատմամշակութային յուշարձան Անիի նշանակութիւնը, թուարկում է այն գործօնները, որոնց ազդեցութեան տակ դարերի ընթացքում քաղաքը վերածուել է անբնակ աւերակների: Դրանց մէջ նա յիշատակում է կլիմայական հակոտնեաները (շոգ-ցուրտ, խոնաւութիւն-չորութիւն, լոյս-մութ եւն.), կենսաբանական գործօնները (կենդանիներ, միջատներ, բոյսեր, սնկեր եւ դրանց արտաթորանքը), երկրաշարժերը (վերջին հազարամեակում տարածաշրջանը տեսել է 6 երկրաշարժ, որոնցից հզօրագոյնը 1988ի Դեկտեմբերի 7ին է), պատերազմական ռազմարշաւները եւ դարերի ընթացքում տեղի ունեցած թալանը: Յատկապէս աւերիչ է եղել մօտակայ բնակավայրերի կողմից Անիի ա-

ւերակների օգտագործումն իբրեւ քարհանք: Այդ վիճակին վերջ է տրուել միայն 1963ին, երբ թուրքական կառավարութիւնը քաղաքն հռչակել է զբոսաշրջութեան գօտի: Այս քայլն ամրապնդուել է 1985ի Հոկտեմբերի 3ին, երբ Թուրքիան ստորագրել է Եւրախորհրդի Գրամադեան Փաստաթուղթը՝ Եւրոպայի ճարտարապետական ժառանգութեան պաշտպանութեան ակտը, որի շնորհիւ Թուրքիան այդ գործում անմասնադէպ օգնութիւն կարող է ստանալ Նիւ Եորքի, Լուվրի եւ Հռոմի փորձագէտներից: Այս ծրագրի իրականացումը, ասում է Քատին, տարածքը կը դարձնի զբոսաշրջութեան գօտի, որն էլ կը մպաստի երկրամասի տնտեսական բարգաւաճմանը: Հեղինակն շահագրգռութիւնների նոյն հարթութեան վրայ է դնում Աղթամարի, Կրեւտի կնոստեան յուշարձանների, Կ. Պոլսի պարսպի պահպանման հարցերը: Հեղինակը շօշափում է նաեւ արգելոցի պահպանման ֆինանսական աղբիւրների գտնման, որոշ յուշարձանների վերականգնման եւ յատկապէս թուրք մասնագէտների կողմից Անիի սելջուկեան ճարտարապետութեան հետազոտութեան կարեւորութիւնը:

Ռանսելդի Պոլիտեխնիկ Ինստիտուտից Վազգէն Բարսեղեանի «Անիի Պահպանութիւնը» հրապարակման մէջ, հեղինակը իրեքը դիտում է 1915ի Մեծ Եղեռնի միջազգային ճանաչման տեսանկիւնից, Անին դիտելով մշակութային ժառանգութեան այն յուշարձաններից մէկը, որը միջազգային հանրութեան կողմից արժանի է յատուկ հոգածութեան: Անիի եւ Թուրքիայի միւս հայկական յուշարձանների պաշտպանութիւնը պիտի հովանաւորուի Միաւորուած Ազգերի Կրթութեան, Գիտութեան եւ Մշակոյթի Կազմակերպութեան (United Nations Educational, Scientific and Cultural Organization; UNESCO), Յուշարձանների եւ Հնագիտական Վայրերի Միջազգային Խորհրդի (International Council on Monuments and Sites; ICOMOS) եւ Մշակութային Սեփականութեան Պահպանման ու Վերականգնման Ուսումնասիրութեան Միջազգային Կենտրոնի (International Centre for the Study of the Preservation and Restoration of Cultural Property; ICCROM) կողմից: Հեղինակը շեշտում է, որ այդ յուշարձանների ուսումնասիրութեան գործում յատկապէս մեծ պիտի լինի հայաստանեան մասնագէտների ներդրումը: Այդ գործում նրանք պէտք է համագործակցեն թուրք պաշտօնեաների եւ մտաւորականների հետ:

Չմայած ժողովածուի տասներեքամեայ յապաղմանը, կարծում ենք այս հրապարակումը ուշացած չէ եւ միջազգային գիտական շրջանակների ուշադրութիւնը եւս մէկ անգամ կը սեւեռի հայոց ճարտարապետութեան այս գոհարի հետազոտութեան խնդիրների շուրջ, իսկ հայագիտութիւնը աւելի համակարգուած մօտեցում ցոյց կը բերի Անի մայրաքաղաքի պատմամշակութային ժառանգութեան ուսումնասիրութեան հարցերում:

ԱՋԱՏ ԲՈՋՈՅԵԱՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Բազմատունիների մայրաքաղաքն իբրեւ հնագիտական պեղումների վայր դեռեւս 1860ականներին մատնացոյց էր արել ֆրանսիացի նշանաւոր կովկասագետ Մարի-Ֆելիքսը Բրոսսէ, տե՛ս՝ M.-F. Brosset, *Les Ruines d'Ani, capitale d'Arménie sous les Bagratides aux X et XI s.: histoire et descriptions*, p. I-II, Saint-Petersbourg, 1860-61: Ռու-

սական Գիտությունների Ակադեմիայի ակադեմիկոս Նիկողայոս Մառի և Երա աշակերտների 1892-93ին և 1904-17ին ձեռնարկած հնագիտական հետազոտությունները դարձրեցուցին Առաջին Համաշխարհային Պատերազմի ժամանակ, որից յետոյ փակուցեց Եւրոպայի Գիտահետազոտական Ինստիտուտ-Թանգարանը։ Այդ հաստատութեան գրադարանը և հնագիտական առարկաները փոխադրուեցին Ռուսաստան և դեռևս չբացայայտուած պարագաներում անհետացան հաւանաբար Վրաստանի կամ Հիւսիսային Կովկասի տարածքում։ Յիշատակուած պեղումների արդիւնքները՝ բացի ռուսական գիտական մամուլում հրատարակուած բազմաթիւ յօդուածներից և Անիի թանգարանի լոյս տեսած պրակներից, ամփոփուեցին Մառի *Ani: Knizhnaia istoriia goroda i raskopki na meste gorodishcha* [Անի. Քաղաքի Գրքային Պատմութիւնն Ու Աւերակ Քաղաքի Պեղումները] (Մոսկուա և Լենինգրադ, 1934) մեմագրութիւնում, որը դարձաւ ամուսնի գիտնականի կարապի երգը։ Դրանից յետոյ, Անիի թեմատիկան երկար ժամանակ դարձաւ հիմնականում հայալեզու հայագիտութեան մեմագրորիք։ Միայն 1984ին շարժուեց սառույցը, երբ Պաօլօ Կումեօն, Արմեն Չարեանը, Գաբրիելա Ուրուշեանը, Նիկոլ և Ժան-Սիշէ Թիերինները և ուրիշներ համատեղ ջանքերով Միլանոյում հրապարակեցին *Documenti di Architettura Armena* [Հայ Ճարտարապետութեան Վաւերագրեր] շարքի 12րդ հատորը, որն ամբողջովին նուիրուած էր Անիին։ Ահա այս քայլից յետոյ միայն վերափոխաւորուեց Անիի նշանակութիւնը համաշխարհային քաղաքակրթութեան համար և սկսուեց մտաւորական շարժում Անիի գիտութեանը և համաշխարհային մշակոյթին վերադարձելու համար։ Այս շարժումն արթնացնելու գործում իր ուրոյն լուծում է ունեցել Եւրոպայի Հոկտեմբերին հրաւիրուած գիտաժողովը։

² *Ani: capitale de l'Arménie en l'an mil*, ouvrage réalisé sous la direction de Raymond H. Kévorkian, Paris: Musées, Pavillon des Arts, 7 février-13 mai 2001: Նոյն թուականին, ֆրանսերէն թարգմանութեամբ հրապարակուեց Եւրոպայի Մառի *Անի* մեմագրութիւնը՝ N. Y. Marr, *Ani, Rêve d'Arménie*, traduit du russe par Aida Tcharkhtchian, Paris, Anagramme Editions, 2001.

³ Պէտք է նշել, որ ժողովածուի մէջ, որի թէ՛ հեղինակները, թէ՛ հիմնական ընթերցողները հայագետներ են, ողջ հայերէն գրականութիւնը յղուած է յիշեալ գրադարձութեանը։ Սեր կարծիքով, գրադարձութիւնից կարելի է օգտուել միայն հայերէնից կատարուող թարգմանութիւնների ժամանակ, երբ հարկ է առաջանում թարգմանուող լեզուին փոխանցել հայերէնի հնչիւնական իւրայատկութիւնները։ Այս առումով պէտք է հետեւել դասական բանասիրութեան, քիզանդագիտութեան և երբայագիտութեան յայտարար սկզբունքներին։ Այսպէս, քիզանդագիտական հանդէսները, յատկապէս՝ *Byzantinische Zeitschrift, Revue des études byzantines, Byzantino-slavica* և ուրիշներ, յուսարեւ գրականութիւնը յղում են յունական տառատեսակներով և որեւէ տառադարձման օգնութեան չեն դիմում։

⁴ Այստեղ առկայ են որոշ անճշտութիւններ։ Մատթեոս Ուռնայեցին յիշատակում է իբրեւ ԺԱ. դարի հեղինակ։ Տիլիշի պարագային, հեղինակը հետեւում է Երան Ժ՛ թէ Ե., այլ Չ. դարում տեղադրող տեսակէտին, որ հայագիտութեան մէջ փոքրամասնական և ըստ մեզ անճշտ կարծիք է։